

«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Պատմությունից սովորելու և դասեր քաղելու խնդիրները
հայոց պատմության ուսուցման գործընթացում

Առարկա՝ Հայոց Պատմություն

Ուսուցիչ՝ Ներսես Ղազարյան

Դպրոց՝ Վ. Մայակովսկու անվան թիվ 7 հիմնական դպրոց

Ղեկավար՝ Արմեն Ղուկասյան

Բովանդակություն

Ներածություն.....	3
Պատմությունից սովորելու և դասեր քաղելու խնդիրները հայոց պատմության ուսուցման գործընթացում.....	5
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	.19

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովուրդ, անկախ աշխարհի որ մայրցամաքում է, ունի իր պատմությունը՝ անցյալի հոլովությամբ ունեցած ձեռքբերումները և անկումները, կերտած հոգևոր և նյութական արժեքները: Նման քայլերով և ժամանակի հոլովությամբ ունեցած ներդրումներով են ազգերի պատմությունները իրար շաղկապվում և ստեղծում ժամանակին բնորոշ արժեքներ: Հայ ժողովուրդը նույնպես իր հաստատուն կնիքն ու խոսքն ունի համաշխարհային պատմության մեջ: Այն վաղ կազմավորման շրջանից մինչև մեր օրերն ունեցել է ձեռքբերումների և անկումների, հերոսամարտերի և կորուստների շրջաններ: Սեփական պատմության իմացությունը հնարավորություն է տալիս հասկանալ անցյալը, վերլուծել ներկան, կանխորոշել ապագան: Հայոց պատմությունը, որպես այդպիսին, մեկ ամբողջություն է և յուրաքանչյուր դրվագ ունի դաստիարակչական վիթխարի ներուժ՝ աճող սերնդի համար հանդիսանալով հայրենասիրության, անձնուրաց պայքարի և ազգային արժանապատվության ապացույցների անսպառ աղբյուր: Եվ ինչպես կասեր ԺԹ դարի գրաքննադատ, հրապարակախոս, հեղափոխական հայացքների կրող դրամատուրգ Պիսարը. «Գիտելիքը և միայն գիտելիքն է մարդուն դարձնում ազատ ու մեծ», այդ իսկ նպատակով, պատմությունից սովորելու և դասեր քաղելու խնդիրները հայոց պատմության ուսուցման գործընթացում շարունակում են մնալ արդիական՝ պայմանավորված անցյալում և ներկայում տեղի ունեցող տարածաշրջանային զարգացումներով: Պատմությունից դասեր քաղելու համար նախ և առաջ պետք է յուրացնել թեման, փորձել հասկանալ տողատակում տեղի ունեցած դեպքերը, փորձել բացել դրանք և վերլուծել, ինչն էլ կնպաստի դժվարին ժամանակներում ճիշտ կողմնորոշվելուն և առաջ ընթանալուն: Ցավոք սրտի, այսօր ևս շատ շատերս դասեր չենք քաղում և ժամանակի մեծ դրամատուրգ, իռլանդական ծագումով անգլիացի Ջորջ Բեռնարդ Շոուի խոսքերով ասած՝ միակ դասը, որ կարելի

է քաղել պատմությունից, դա այն է, որ մարդիկ պատմությունից ոչ մի դաս չեն քաղում¹:

Այս համեստ հետազոտական աշխատանքի նպատակն է փորձել ներկայացնել սովորելու և դասեր քաղելու խնդիրները հայոց պատմության ուսուցման գործընթացում, զարգացնել անցյալում տեղի ունեցած դեպքերի վեր հանումը և ներկայիս լույսի ներքո իրադարձությունները համեմատելու և համադրելու կարողունակությունը, որից էլ բխում են հետևյալ խնդիրները.

- սովորողի մեջ հետաքրքրություն առաջացնել հաղորդակից դառնալու նախորդ սերունդների ստեղծած հոգևոր- մշակութային արժեքներին,
- յուրացնել անցյալում տեղի ունեցած դեպքերը, օգնել հասկանալու պատմական իրադարձությունները, երևույթները
- լուսաբանել դեպքերն ու երևույթները պատմական արդարության, ազգային շահի տեսանկյունից
- դեն նետել հալածյալի հոգեբանությունը, փորձել կերտել նորանոր հաղթանակներ՝ ոգեշնչվելով անցյալի փառահեղ հաղթանակներից:

¹ <https://mediamag.am/bernard-show-30-quotes>

Պատմությունից սովորելու և դասեր քաղելու խնդիրները հայոց պատմության ուսուցման գործընթացում

Պատմությունը անցյալի և ներկայի դեպքերի նկարագրությունն է և ինչպես կասեր մեծ լեզվաբան Հրաչյա Աճառյանը. «Պատմությունը եղած դեպքերը նկարագրելն է»² : «Հայոց պատմություն» առարկայի նպատակը հայկական քաղաքակրթության վերաբերյալ պատմական համակարգված գիտելիքի ձևավորումն է, դրանից սովորելն ու դասեր քաղելու միջոցով բարդ իրավիճակներում չհայտնվելը և հաղթանակած դուրս գալը: Առարկան անձին դարձնում է պետականամետ, ազգային ինքնագիտակցություն և դիմագիծ ունեցող, սեփական ժողովրդի ու պետության դերակատարումը արժևորող, ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու քաղաքացի:

Հայ ժողովրդի պատմությունը լավագույնս հասկանալու և ներկայացնելու համար անհրաժեշտ է ժամանակագրական առումով այն բաժանել մի քանի դարաշրջանների՝ պարբերացումների: Ներկայումս հայոց պատմության պարբերացումը կատարվում է հետևյալ սկզբունքով³.

ա. Հնագույն շրջան - անհիշելի ժամանակներից մինչև Վանի թագավորության անկումը,

բ. Հին շրջան- Երվանդունիների թագավորության կազմավորումից մինչև քրիստոնեության հռչակումը պետական կրոն,

գ. Միջնադար- քրիստոնեությունը պետական կրոն հռչակելուց մինչև հայ ազգային-ազատագրական շարժման վերելքը,

դ. Նոր շրջան- սկսվում է հայ ազատագրական շարժումներով և հասնում մինչև Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը,

² Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հատոր Ա, Երեվան-1971, էջ 51:

³https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6, 12.09.2023թ, 19:30:

ե. Նորագույն շրջան - Ընդգրկում է Հայաստանի առաջին, երկրորդ և երրորդ հանրապետությունների, ինչպես նաև Արցախի պատմությունը:

Հայ ժողովրդի կազմավորման երկարատև պրոցեսի ընթացքում առաջատար դեր է կատարել տնտեսության, պետականության և մշակույթի զարգացման տեսակետից Հայկական լեռնաշխարհի մերթ այս, մերթ այն շրջանը⁴ : Ուստի կարևոր է պատմությունից սովորելու և դասեր քաղելու ճանապարհին՝

1. Ուսումնասիրել հայկական քաղաքակրթության ձևավորման և զարգացման ընթացքը, ձեռքբերումներն ու բացթողումները,
2. հասկանալ պատմական իրադարձությունները, երևույթները, դեպքերը, դրանց փոխկապակցվածությունն ու հաջորդական շղթան,
3. ներկայացնել հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային քաղաքակրթության լույսի ներքո,
4. Զարգացնել քննադատական մտածողությունը: Կարդացած նյութը հետազոտելու, վերլուծելու, գնահատելու, հարցադրումներ կատարելու, բանավիճելու, սեփական տեսակետներն ու դիրքորոշումները հիմնավորելու, որոշումներ կայացնելու, կարողություններն ու հմտությունները զարգացնելու և օբյեկտիվ գնահատական տալու,
5. շեշտել սերունդների կապը պատմության շրջափուլերում,
6. Վերլուծել պատմական զարգացումների առանցքային պատճառները,
7. Բացահայտել պատմական գործընթացների պատճառա-հետևանքային Կապերը,
8. Հասկանալ պետական կառավարման համակարգի փոփոխությունները հայ հասարակական քաղաքական ասպարեզից ներս,

⁴ հմմտ. Հայ Ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա Պատմության ինստիտուտ, Երևան 1971, էջ 12, այսուհետ՝ Հայ Ժողովրդի Պատմություն:

9. Կարողանալ վերլուծելով Հայոց պատմության առանցքային խնդիրների պատճառահետևանքային կապերը, մատնանշել լուծման հնարավոր և ինչու չէ, անհնարին տարբերակները

10. Ձևավորել վերաբերմունք սեփական պետության, մշակույթի, պատմության և ապագայի տեսլականի նկատմամբ: Հայոց պատմության իմացության միջոցով է ձևավորվում ազգային մտածելակերպը, պատասախանատու և կշռադատված որոշումներ կայացնող քաղաքացին:

Ներկայումս, երբ աշխարհը թևակոխել է զարգացումների և փոփոխությունների գերարագ փուլը, հաճախ մարդիկ առաջ են քաշում այն տեսակետը, թե ում է պետք պատմությունը, քանի որ քսանմեկերորդ դարը տեխնիկայի դար է: Այո, նման հարցադրումներն ակամայից փաստարկված և համոզիչ են թվում, սակայն իրականում սրանք կեղծ ճշմարտություններ են: Աշխարհի սկզբից մինչև քսանմեկերորդ դարը զարգացած երկրները, որոնք գիտելիքահեն կրթության վրա են հիմնված, իրենց կրթական համակարգերը չեն ոչնչացրել և նորը ստեղծել, այլ անցյալի հարուստ ժառանգությանը գումարել են նորօրյա ձեռքբերումները և ավելի հզորացել: Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է կորուստներով ու մաքառումներով, խիզախումներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով հարուստ պատմություն ու ժառանգություն: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք դրել արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելու ու գորեղացնելու անսասան վճռականությամբ: Որտեղ էլ որ գտնվենք, հայոց պատմությունն իմանալն անհրաժեշտ է, որովհետև այն ունի ճանաչողական և վերլուծական հսկայական հարուստ ժառանգություն: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական

մտքին ու մշակույթին: Հայոց պատմության իմացությունն առավելագույնս հնարավորություն է տալիս իրականացնելու մեր ազգային իդեերը, ձևավորելու ու պահպանելու հայի կերպարը: Այս ամենն ավելի է արդյունավորվում, երբ վերլուծաբար ենք մոտենում անցյալում տեղի ունեցած դեպքերին և կառուցողական քննադատությամբ ենք դիտարկում այն խնդիրները, որոնց պատճառով թուլանում էր կամ պետությունը կորցնում էր անկախությունը: Պատմության յուրաքանչյուր փուլում ունեցել ենք յուրահատուկ դեպքեր, որոնց լույսի ներքո կարող ենք տեսնել ներկա և անցյալ ժամանակների փոխադարձ կապը: Եթե դիտարկենք վերը նշված պատմության պարբերացումներից Հնագույն շրջանը (անհիշելի ժամանակներից մինչև Վանի թագավորության անկումը), ապա կտեսնենք՝ և՛ այն ժամանակ, և՛ հիմա, Հայաստան պետությունն ունեցել է թե՛ բարյացակամ հարևաններ, թե՛ թշնամիներ. վերջիններն էլ բացասական են ազդել զարգանալուն և առաջ ընթանալուն: Սակայն այս ամենը հնարավորություն է ընձեռել վերադասավորվելու, շրջահայաց թագավորների անդուլ աշխատանքի միջոցով հզորանալու և դառնալու ժամանակի գերտերություններից մեկը, ում հետ հաշվի չէին կարող չնստել որևիցե պետություն: Սակայն վերելքներին հաճախ ուղեկցում էին անկումները, ինչն էլ դառնում էր մի ամբողջ ժողովրդի զգալի մասի աստանդական դառնալուն: Վանա լճի ավազանից հայկական էթնիկական տարրերը թափանցում են դեպի հյուսիս՝ Արարատյան դաշտավայր, որը դառնում է արդեն կազմավորված հայ ժողովրդի տնտեսական, քաղաքական ու մշակութային չորրորդ և կարևորագույն կենտրոնը: Այն դեպի իրեն է ձգում հայկական բոլոր երկրամասերը՝ միացնելով նրանց մեկ ընդհանուր պետական կազմավորման՝ Մեծ Հայքի թագավորության մեջ, որը հելլենիստական ժամանակաշրջանում Հռոմեական կայսրության և Պարթևական թագավորության կողքին դարձավ երրորդ մեծ պետությունը⁵:

Մենք հաճախ ենք քննարկում հայ ժողովրդի առջև ծառացած խնդիրները, պատմության արշալույսի ներքո փորձում հասկանալ պատմական անցքերը, սակայն

⁵ Հայ Ժողովրդի Պատմություն, էջ 13:

շատ հաճախ խնդրի կամ խնդիրների լուծումները թողնում ենք կիսատ և ոչ լիարժեք: Անցյալի փառահեղ էջերը թերթելուց հաճախ հանդիպում ենք նաև կորուստներին և անկումներին: Կարևոր է հարցը դիտարկելուց հանգամանորեն ուսումնասիրել ժամանակաշրջանը, միջավայրը, տարածաշրջանային դեպքերը, զարգացվածության մակարդակը և այլն:

Դիտարկենք պատմության համար մի փոքրիկ ժամանակահատված հանդիսացող Ե դարը: Մեզ մոտ հինգերորդ դարը հայտնի է որպես Ոսկե դար անվամբ: Հաճախ ակնածանքով ենք խոսում այն ամենի մասին, թե ինչեր արվեց այս ժամանակահատվածում և դեպքերը ներկայացնելով՝ հաճախ աշակերտին չենք կարողանում փոխանցել այն ահռելի աշխատանքի և ձեռքբերումների զգացական վիճակը, որը նրան կոզկորի և կդարձնի ավելի հայրենասեր և նպատակասլաց: Պետք է վեր հանել պատմության ժամանակահատվածի նշանավոր անձանց և իրենց քայլերից բխած դեպքերը, և ինչպես Աստվածաշնչում է գրված. «Ո՛չ որ ճրագ չի վառի և կաթսայի տակ չի թաքցնի կամ մահճի տակ չի դնի, այլ կդնի աշտանակի վրա, որպեսզի ովքեր մտնեն, լույսը տեսնեն» (Դուկ. Ը 16)⁶: Այո, նման դժվարին և օրհասկան մի ժամանակահատված էր հինգերորդ դարի սկիզբը, երբ մեկ դար էր, ինչ քրիստոնեությունը հաստատվել էր որպես պետական կրոն, սակայն շատ վայրերում մարդիկ հեթանոսական բարքերի կրողն էին, ինչն էլ երկիրը դնում էր տարբեր մակարդակների վրա: Կարող ենք շեշտել, որ դա իր մաշկի վրա զգաց Մեսրոպ Մաշտոց վարդապետը:

Մաշտոցը, վարդապետական կոչումն ստանալուց հետո, մի քանի հոգևորական ընկերներով անցնում են Գողթն գավառը՝ անկարգ և «անդարման» տեղեր, ուր հեթանոսությունն արմատացած էր⁷: Քարոզչության ժամանակ էլ հասկանում են, որ արդյունքն ավելի մեծ կլիներ, եթե ոչ թե հունարեն կամ ասորերեն

⁶ Աստուածաշունչ, Մատեան Զին և Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Եւ-Յայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, 1999, էջ 88:

⁷ հմմտ. Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Հատոր Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001թ., էջ 126:

լեզուներով կարդային Աստվածաշունչը և բացատրեին, այլ հայերեն: Վերադառնում են կաթողիկոսարան և Մաշտոց վարդապետն իր ողջ մտորումները փոխանցում է Սահակ Պարթև կաթողիկոսին: Կաթողիկոսը և Վռամշապուհ արքան ցուցաբերում են ամեն անհրաժեշտ միջոցներ, որպեսզի Մաշտոցն և աշակերտները ջերմեռանդ կերպով ձեռնամուխ լինեն գրերի գյուտի ստեղծմանը: Հաջողությամբ է պսակվում ողջ գործընթացը և հաղթանակած Մաշտոցն ու աշակերտները վերադառնում են հայրենիք, իրենց հետ բերելով հայոց սրբազան այբուբենը: Փաստորեն՝ ներկա ժամանակաշրջանում երկիրն ուներ արմատացած խնդիրներ, սակայն այն լուծվեց Վռամշապուհ թագավորի, Սահակ Պարթև կաթողիկոսի, Մեսրոպ վարդապետի և աշակերտների անդուլ և տքնաջան գործունեության շնորհիվ: Այստեղ մենք տեսնում ենք մի ամբողջ խնդիրների հավաքածու, ինչն իր տրամաբանական լուծումն է ստանում շրջհայաց գործելառճի շնորհիվ: Սա լավագույն դեպքերից է, որ խնդիրներով լեցուն մի ժամանակահատված փոխակերպվում է հնարավորություններով լի ընթացքի, ստեղծվում է համակարգ, որի պտուղները երկար ժամանակ վայելում էր մի ողջ ժողովուրդ: Պատահական չէ, որ հենց այս շրջանն անվանվեց Ոսկե դար, ստեղծվեց կուռ կրթական համակարգ: Կարևոր է պատմության ընթացքում դիտարկել հատկապես այն դեպքերն ու իրադարձությունները, երբ առկա խնդիրները ճիշտ ուղղորդելու արդյունքում համակարգային լուծում է ստացվում: Վերևում մենք նման խնդիրներից մեկը դիտարկեցինք, դա Պետություն-եկեղեցի ճիշտ հարաբերության արդյունքում ծնված գրերի գյուտն էր: Այն համակարգային լուծում ստացավ, ինչի արդյունքում հինգերորդ դարն անվանվեց Ոսկե դար: Այստեղ մենք տեսնում ենք, որ Սահակ կաթողիկոսի, Մաշտոց վարդապետի, Վռամշապուհ արքայի մահվանից հետո էլ գրաճանաչության լույսը տարածվեց ողջ Հայաստանում, վերելք ապրեց մշակույթն ու արվեստը: Այն դարեր ի վեր ոչ միայն պահպանեց հայի գենը, այլև քրիստոնեությունը քրիստոնեացրեց, դարձավ հայի համար անբաժանելի մաս, գիտությունը դարձավ մրցունակ: Հայի անունն սկսվեց հիշատակվել ոչ թե քարանձավային

քաղաքակրթության օրինակ, այլ լուսավորության, նորարարության տիպար, համաշխարհային գրականությունում իր ուրույն տեղը զբաղեցնող ազգ:

Համակարգային նման լուծում տեսնում ենք նաև Ք.ա. 190-ական թթ., երբ Արտաշես Ա կատարեց հիմնային բարեփոխումներ: Նրա շրջահայացության արդյունքում երկիրը բարգավաճեց, ստեղծվեց բարենպաստ միջավայր գործունեության: Ահա նա հող նախապատրաստեց շուրջ մեկ դար անց Տիգրան Աշխարհակալի գործունեության համար: Հաճախ ենք բարձրաձայնում ծովից ծով ունենալու, աշխարհակալ լինելու հանգամանքը՝ սակայն մոռանալով ակունքներում հող նախապատրաստած և համակարգային լուծումներ տված այն նվիրյալների անունները, որոնք իրենց ամբողջ կյանքը դրեցին երկրի շենագման և բարգավաճման համար: Պատմության ուսուցման ընթացքում դասեր չքաղելը պատմությունը դարձնում է անիմաստ և ժամանակավրեպ, անտեղի ռեսուրսի և ժամանակի կորուստ: Հաճախ է պատահում, երբ դժվարությունների առջև հայտնվելով սովորողն ընկրկում է և քսանմեկերորդարյան մտածելակերպով ձգտում է հեշտին և դյուրինին: Յուրաքանչյուր ժամանակաշրջանում ունեցել ենք այնպիսի դեմքեր, կրթական հաստատություններ, աշակերտական խմբեր, որոնք կարողացել են կերտել և արարել ու դառնալ խնդիրների լուծման լավագույն օրինակ: Այն անհրաժեշտ է ցույց տալու, որ յուրաքանչյուր խնդիր կարելի է լուծել և հաջորդ սերունդներին թողնել բարեկեցիկ վիճակ:

Դասերի ժամանակ հաճախ են աշակերտները ցանկանում առկա խնդիրները դիտարկել ոչ թե հնագույն ժամանակների ծիրից ներս, այլ մերօրյա, նորագույն շրջանի պատմությամբ արձանագրված դեպքերով: Ցավոք ներկայումս ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ տարածաշրջանային փոփոխությունները, ներպետական խնդիրները, միջազգային մարտահրավերներն այնքան շատ են, որ գրեթե յուրաքանչյուր օրը լի է նոր, թարմ իրողություններով և լուրերով: Տասնամյակներ առաջ Արցախյան հերոսամարտի փառահեղ էջերը փոխարինվեց 2020թ. սեպտեմբերյան 44-օրյա անհավասար պայքարով ու ցավալի կորուստներով և՛

մարդկային, և՛ տարածքային, և՛ նյութական: Ունեցանք անկումներ և մինչ այս պահը երկրի առջև ծառացած խնդիրները, միջազգային դերակատարների փոփոխությունները հանգեցնում են նորանոր ճգնաժամերի: Ներկայիս իրավիճակն իր զարգացումներով շատ հաճախ կարծես նմանվում է 1918-1920 թվականներին: Կարելի է դասեր քաղել Առաջին հանրապետության գործած և՛ հաջողություններից, և՛ սխալներից: Այս ամենը տեսական և պարզունակ բնույթ չունի: Նմանեցնելով դեպքերը՝ միանշանակ լուծումներն ու մեթոդները դրանց իրականացման պետք է այլ կերպ լինի: Հայաստանը պետք է ավելի ժամանակակից և երիտասարդ դասեր քաղի, որովհետև աշխարհը ներկայումս փոփոխվում է շատ արագ, և այն, ինչն այսօր ուսանելի է, վաղն արդեն դառնում է ոչ միայն հին ու ժամանակավրեպ, այլ կարող է նույնիսկ կիրառվելու դեպքում դառնալ սխալ և հանգեցնել նորանոր վտանգների: Եվ այս տեսանկյունից ահա, ժամանակն է, որ մենք մեր պատմությունը վերլուծենք ոչ միայն դասեր քաղելու, այլև ավելի շատ ինքներս մեզ հասկանալու և մեր գործողություններում մեթոդաբանական նորարարություններ կիրառելու համար: Այն ոչ թե պետք է լինի դասեր քաղելու պարզունակ կոչերի առիթ, այլ գիտական լրջագույն ուսումնասիրությունների և մշակումների, հետևությունների, և նաև որպես այդ ամենի արդյունք՝ հանրային գիտակցության և կարծիքի ձևավորման հարցում նոր մոտեցումների, նորարարությունների, հարկ եղած դեպքում հանրային կարծիքի փոփոխությունների մշակման գործընթաց: Դասերը մեր բոլորի աչքի առաջ են՝ երեկ և այսօր տեղի ունեցող միջազգային զարգացումների տեսքով: Դրանք շատ պարզ են՝ ժամանակակից աշխարհում մրցունակ լինելու համար պետք է նախևառաջ չթալանել սեփական երկիրը, հատկապես երբ այդ երկրի ռեսուրսները բավական սուղ են, առավել ևս, երբ այդ երկիրը, ըստ էության, չավարտված և թերևս երբեք էլ չավարտվելիք պատերազմի մեջ է: Իհարկե, բոլորիս ցանկությունն է, որ մեր տարածաշրջանում խաղաղություն, մշակութային ներդաշնակություն լինի: Բայց Հայաստանը որքան էլ ձգտի լինել այդ ամենի առաջամարտիկը, դա միայն Հայաստանից կախված չէ, իսկ առնվազն տարածաշրջանում ոչ միայն

խաղաղությանը չի նպաստում, այլ դառնում է խաղաղության ճանապարհին զոհաբերվողը և անիմաստ ընկրկողը: Հետևաբար՝ Հայաստանը չի կարող իր անվտանգությունը զոհել ինտեգրացիայի լուսավոր, բայց առայժմ խիստ տեսական «խաղաղական» գաղափարներին: Եվ ուրեմն՝ դասն այդ իրավիճակում պետք է լինի սեփական երկրի ռեսուրսների առավելագույն, գրեթե բացառիկ արդյունավետ և արդարացի օգտագործումը, քաղաքակիրթ աշխարհի արժեքային տրամաբանության մաս լինելը, այդ արժեքների կրելը: Պետք է բաձրացվի հանրային շահի գերակայությամբ պետական ու հասարակական համակարգի ձևավորումը, որը հնարավորություն կտա արտաքին ճնշումների հանդեպ լինել հնարավորինս քիչ խոցելի, ինչի շնորհիվ էլ հնարավոր կլինի ազատ և համարձակ ներկայացնել ու պաշտպանել սեփական շահերն աշխարհում, նաև օգտագործելով սխյուռքահայության կարողություններն ու հնարավորությունները:

Պատմությունից դասեր քաղելու վերաբերյալ ամենից պարզ ու տարածված պատասխանները սրանք են.

1. Պետք է սովորել անցյալից և փորձել չկրկնել այն սխալները, որոնք հանգեցնում են կազմաքանդման

2. Պետք է իմանալ անցյալը, կառուցելու ներկան, կանխատեսելու ապագան:

Միևնույն ժամանակ պետք է ընդունել այն փաստը, որ նշված պատասխանները միանշանակ չեն, և եթե պատմության մեջ կարող են լինել իրավիճակներ, որտեղ նմանություններն ակնհայտ են, այդուհանդերձ, ամբողջական կրկնությունը կետ առ կետ բացառված է: Մյուս կողմից, հարկ է նշել, որ այն կարող է հուշումներ տալ, քանի որ չափազանց մեծ նշանակություն ունի պատմական անցյալը, որով և հաճախ պայմանավորված է ներկան:

Քանի որ պատմությունն ուսումնասիրում է մարդկային գործողություններ, այն անխուսափելիորեն առաջ է քաշում էթիկական հարցեր: Մարդկանց չենք կարող դիտարկել նույն հարթությամբ, որով ուսումնասիրում ենք աշխարհագրություն կամ քիմիա: Դրանից բացի, անցյալը հաճախ պարունակում է շատ խնդրահարույց

պատմություններ՝ ջարդերի, փոքրամասնությունների շահագործման և այլ սարսափների մասին, ինչպես նաև վսեմ պատմություններ՝ հերոսություն ու ինքնագոհություն: Հետևաբար, բնական է, որ պատմություն ուսումնասիրելիս առաջանում է հպարտության և կորստի զգացումներ: Ավելին՝ անցյալն ուսումնասիրելիս պատմաբաններն օգտագործում են վկայություններ, որ հաճախ հիմնաված են այլ մարդկանց կյանքի փորձի վրա: Սա առաջ է քաշում հետևյալ հարցը՝ «մեր պարտավորությունները նրանց հանդեպ»: Վերջապես, մարդիկ հաճախ ցանկանում են անցյալից սովորել, «դասեր» քաղել, անցյալի սխալները ներկայում չկրկնել. ինչքանո՞վ է այն փաստարկված և ինչպիսի՞ խնդիրներ կան այդ առումով:

Սովորողները պետք է՝

1. Կարողանան անցյալը վերակառուցեն և խուսափեն անցյալի մարդկանց որևէ ներկա ժամանակի չափանիշներով դիտարկելուց
2. Նկատեն մեր պարտավորությունները ցեղասպանության ոգեկոչման կամ անցյալում գործած սխալների հատուցման տեսանկյունից:
3. Դիտարկեն անցյալի հիմքով ներկայում հետևություններ կատարելը՝ հաշվի առնելով համատեքստի փոփոխությունն ու ներկայի և անցյալի միջև եղած տարբերությունները:

Պատմության դասերը շատ լավ հնարավորություն են ուսումնասիրելու անցյալում տեղի ունեցած պատերազմական խնդիրները, որոշելու դրանցից խուսափելու ներկայիս գործիքակազմը: Այս խնդիրները դիտարկելու համար հրաշալի միջոց է հուշահամալիրների քննարկումը: Հուշահամալիրները բացահայտում են էթիկական հարթության և պատմական նշանակության միջև առկա ընդհանրությունները: Հայոց պատմության ուսուցման, ուսումնասիրման և դրա միջոցով անցյալի սխալները վեր հանելու նպատակով անհրաժեշտ է լուծել հետևյալ խնդիրները.

1. Սովորողներին զինել Հայոց պատմության հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակներն ընդգրկող ամբողջական գիտելիքներով: Արժևորել

ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնագոհ սխրանքները:

3. Պատկերացում տալ մեր ժողովրդի կյանքի ու կենցաղի, նիստուկացի, ավանդույթների, վարքի, հասկանալի դարձնել, թե ինչպես են ապրել ու աշխատել, կառուցել, ընտանիք կազմել, ինչու չէ, նաև ուրախացել ու տխրել: Այս գիտելիքները սովորողներին կմոտեցնեն մեր ազգային արմատներին ու ակունքներին: Ազգայինը հզորացնելը կօգնի նրանց ավելի ուժեղ ու ամուր կանգնել հայրենի հողի վրա, զգալ հայրենիքի ուժն ու զորությունը:

4. Ներարկել այն գաղափարը, որ հայրենիքին ու հայոց բանակում ծառայելը պատվի գործ է: Ցույց տալ, որ հայրենիք ստեղծել նշանակում է բեկոր առ բեկոր հայտնաբերել, իմաստավորել, պատմականացնել իր երկիրը: Նշանակում է այնպես հարազատել իր երկիրը, որ նրանում ոչինչ չմնա անհայտ, անխոս, մեռյալ⁸:

5. Հասնել այն բանին, որ երբեք աշակերտի մոտ չտիրի այն գաղափարը, որ իրենից ոչինչ կախված չէ և ցանկացած մեծ խնդիր որոշում են և ինքը դերակատարություն չունի:

6. Բացահայտել պատմական ճշմարտությունը, նշել, որ այն ծնվում է տարբեր սկզբնաղբյուրների համադրումից, կարծիքների ու տեսակետների բախումից, մտքերի ու գաղափարների զուգորդումից:

7. Ունեցած նյութերը համադրելու և վերլուծելու մեծ փորձառություն փոխանցել ուսանողին:

Հայկ նահապետից մինչև Հայոց ցեղասպանություն՝ պատմական շատ ու շատ իրադարձություններ մշտական քննարկման առարկա են մեր հասարակության տարբեր հատվածների համար: Մյուս կողմից, քաղաքական գործընթացները

⁸ Գարեգին Նժդեհ, Չխրատվող ժողովուրդը, Վերնատուն, 2021, էջ 12:

երբեմն անցյալի մասին գոյություն ունեցող պատկերացումների զոհ են դառնում:

Մեր պատմությունը մեր պարծանքն է: Ունենք աշխարհի ամենահին քաղաքներից մեկը՝ Էրեբունի-Երևանը, 301թ.-ին ընդունել ենք քրիստոնեությունն իբրև պետական կրոն, 405 թ. ստեղծել սեփական գրերը: Կարողացել օժանդակել հարևան Վրաստանին նույնպես ունենալու գիր, Կիլիկիայում վերաստեղծել Հայկական պետականություն ու դարձել աշխարհի ամենահզոր տնտեսական խաչմերուկներից մեկը: Ինչո՞ւ դարերով՝ 1045 թ-ից, կամ Կիլիկիայի անկումից՝ 1375 թ-ից մինչև 1918թ-ը, չունենալով պետականություն, չվերացանք պատմության թատերաբեմից: Ահա այս խնդրահարույց ժամանակաշրջանների մասին պետք է ներկայացնել հանգամանալից, քանի որ Հայ Առաքելական եկեղեցին, ինչպես վերևում տեսանք, պետության հետ դարձավ լուսավորության ջահակիրը, այնպես էլ այս դժվարին ժամանակներում ուղղորդեց ժողովրդին և զբաղվեց ազգապահպանությամբ: Այս ու բազմաթիվ այլ հարցերի պատասխանների փնտրտուքն է միգուցե այն տոկունության գաղտնիքը, որը մեզ թույլ է տվել ապրել ու հասնել մինչև 21-րդ դար: Պատմությունը հաճախ կրկնվում է, փոխվում են դերակատարներն ու դեմքերը:

Եզրակացություն

Պատմությունից դասեր քաղելու և սովորելու համար նախ և առաջ անհրաժեշտ է կարդացած նյութը, պատմական դեպքերը և երևույթները, ժամանակի բարքերը, մարդկանց հոդեբանությունը, քաղաքական իրավիճակները, որոնք ժամանակ առ ժամանակ կարող են կրկնվել և փոխվել, ճիշտ պրիզմայի լույսի ներքո քննարկել և ներկայացնել: Այս մասին տեսականորեն գիտեն շատ շատերը, բայց քչերն են գործնականում փորձում դասեր քաղել: Պատմության իմացությունը կարևոր է, քանի որ այն օգնում է վերլուծել, անալիզի ենթարկել տեղի ունեցած դեպքերը, ներկայի ու ապագայի վերաբերյալ ճիշտ դիրքորոշում և ուղղություն վերցնելու համար: Դրա համար անհրաժեշտ է մշտապես մի շարք կետեր ունենալ աչքի առաջ: Դրանք են՝

- Արժևորենք մեր դարավոր հարուստ ավանդույթը,
- Մշտապես կարմիր գծի նման մեր առջև ունենանք հայրենի հողի վրա ապրելու ու արարելու գաղափարը,
- Շրջապատի նկատմամբ լինենք սրտացավ, քանի որ այն, ինչ մենք չենք արժևորում, կարժևորի դրա արժեքն իմացողը և մենք կգրկվենք դրանից,
- մեր պատմությունն արժևորենք և տեր կանգնենք,
- վերադարձ պատմական արմատներին,
- ազգայինը դարձնել առաջնային և օրակարգն ու գործունեությունը կառուցել ազգայինի շուրջ,
- առաջնորդին ընտրել հայրենասիրության և նվիրվածության պրիզմայի ներքո,
- սեփական ուժերի նկատմամբ չլինել թերահավատ,
- համագործակցել ցանկացածի հետ, այն երբեք չվերածելով օտարամոլության,
- արժևորել Հայ առաքելական եկեղեցին, իմանալ քրիստոնեական արարողությունները, ինչն անաղարտ կպահի հայի ինքնությունը,
- Բարձր պահել բանակի պատիվը, քանի որ սեփական բանակը չգնահատող ազգը կգնահատի օտարի բանակը,
- Զարգացնել տնտեսապես հարուստ երկիր ունենալու գաղափարը,

- Մենք-ի գաղափարը միշտ վեր դասել ես-ի գաղափարից
- Զարգացնել վերլուծող և դեպքերը ճիշտ մեկնաբանող սերունդ:

Կարելի է այս կետերին ավելացնել բազում այլ կետեր, սակայն եթե մենք կարողանանք պահել վերը թվարկված կետերն, ուրեմն կարող ենք արձանագրել, որ մենք հաջողել ենք և պատմության խնդիրները կարգավորելը մեր համար դժվարություն չի առաջացնի:

Օգտագործված գրականության ցանկ

Գրքեր

- Աստուածաշունչ, Մատեան Հին և Նոր Կտակարանների, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, 1999:
- Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, Հատոր Ա, Երեւան-1971:
- Հայ Ժողովրդի պատմություն, Հայկական ՍՍՀ Գիտությունների Ակադեմիա Պատմության ինստիտուտ, Երևան 1971:
- Մաղաքիա արքեպս. Օրմանեան, Ազգապատում, Հատոր Ա, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001թ.:
- Գարեգին Նժդեհ, Չխրատվող ժողովուրդը

Կայքեր

- <https://mediamag.am/>
- https://hy.wikipedia.org/wiki/%D5%80%D5%A1%D5%B5%D5%B8%D6%81_%D5%BA%D5%A1%D5%BF%D5%B4%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6,